Հավելված
ՀՀ ԿԳՆ ԳՊԿ նախագահի
«24» հունվար 2011 թ.
N 03-Ա/Ք հրամանի

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-13

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը, ի դեմս տնօրեն Խաչատուր Մայրապետյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 51149600 /հիսունմեկ միլիոն հարյուր քառասունինն հազար վեց հարյուր/ դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1. կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2.կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4.իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր

եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2.ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է

51149600 /հիսունմեկ միլիոն հարյուր քառասունինն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև 47057632 /քառասունյոթ միլիոն հիսունյոթ հազար վեց հարյուր երեսուներկու/ ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է
(թվերով և բառերով)
հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գումարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի աժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24, Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100, ՀՎՀՀ 00005673 Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	ք. Երևան, 0082, Նորագյուղ 108, Զարգացման հարկային բանկ հ/հ 1810052011973313, ՀՎՀՀ 01803321 Տնօրեն՝ Խ.Մայրապետյան
(ստորագրության) Կ.Տ.	(ստորագրության) Կ.Տ.

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ստեփան Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 1

«27» 01 2015թ.

N 2-13 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

"Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը" ծրագրի

(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե:
2. Աշխատանքի նպատակը՝
   թանկարժեք և հազվագյուտ, անհետացման սպառնալիքի տակ հայտնված դեղատու և եթերայուղատու բույսերի, ինչպես նաև արժեքավոր ծառաթփատեսակների տնկիների հիդրոպոնիկ արտադրության գիտական հիմունքների ու կենսատեխնոլոգիաների մշակում՝ բարձրարժեք, որակյալ և էկոլոգիապես մաքուր բուսահումքի և մեծաքանակ ու անհրաժեշտ տեսակային կազմով ծառաթփատեսակների որակյալ տնկիների արտադրություն ապահովելու նպատակով՝ նպաստելով կենսաբազմազանության պահպանմանը և լարված էկոլոգիական վիճակի զգալի բարելավմանը:
3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (1 էջի սահմաններում, կցվում է):
4. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում, կցվում է):
5. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը՝
   տարեկան ամփոփ հաշվետվություն:

Տնօրեն՝ _____ (Խաչատուր Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ստեփան Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

3. Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները

2015թ. հետազոտություններ են տարվելու հազվագյուտ և մեծ պահանջարկ ունեցող մի քանի դեղատու և եթերայուղատու բուսատեսակների (խնկածաղիկ - *Origanum vulgare L.* և *Origanum majorana L.,* գորշ մարիամախոտ -*Teucrium polium L.*, ուրցադաղձ - *Zizifora clinopodioides* Lam., դեղատու ծնեբեկ - *Asparagus officinalis* և այլն) անհող աճեցման ֆիզիոլոգա-կենսաքիմիական, ագրո-ռադիո-դեղաքիմիական առանձնահատկությունների ուսումնասիրման, ինչպես նաև որոշ հեռանկարային դեկորատիվ ծատատեսակների ու թփերի /արծաթափայլ եղևնի - *Picea pungens*, բրգաձև թույա - *Thuja occidentalis 'Pyramidalis'*, տոսպախ – *Buxus L.*, թխկի ամերիկյան - Acer negundo Flamingo և այլն/ տնկիների արագացված բազմացման կենսատեխնոլոգիաների մշակման ու կատարելագործման նպատակով:

4. Աշխատանքի բովանդակությունը

Հիդրոպոնիկայի ինտենսիվ զարգացումը մեր հանրապետությունում և դրա լայնամասշտաբ ներդրումը արտադրության մեջ հնարավորություն կտա գյուղատնտեսության ոլորտ ներառել Հայաստանում առկա տասնյակ հազարավոր հեկտարների հասնող, երկրագործության համար ոչ պիտանի աղուտ, ալկալի, քարքարոտ հողատարածքներ, բաց հանքեր և այլն: Միևնույն ժամանակ, հիդրոպոնիկայի ղեկավարվող պայմանները հնարավորություն են ստեղծում գրեթե ամբողջովին օգտագործելու բույսի պոտենցիալ հնարավորությունները, ապահովելու բարձր արդյունավետություն, վեգետացիայի ողջ ընթացքի վերահսկողության և կառավարման շնորհիվ ստանալ նախապես ծրագրված բաղադրությամբ էկոլոգիապես մաքուր և որակյալ բուսահումք:

Նշենք, որ ՀՀ ԳԱԱ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտը բացօթյա հիդրոպոնիկայի խնդիրներով և փոքրատոննաժ բույսերի /դեղաբույսեր, եթերայուղատուներ, համեմունքային մշակաբույսեր և այլն/ անհող աճեցման կենսատեխնոլոգիաների մշակման հարցերով զբաղվող առաջատար գիտական կենտրոն է աշխարհում և միակն է նախկին ԽՍՀՄ ողջ տարածաշրջանում:

Առանձնապես կարևոր նշանակություն ունի անհետացման եզրին հայտնված որոշ թանկարժեք բուսատեսակների տնկանյութի արագ բազմացումը միկրոկլոնալ /*in vitro*/ և հիդրոպոնիկ համակցված եղանակով, որը հնարավորություն կտա կարճ ժամկետում արտադրել մեծաքանակ և առողջ տնկանյութ: Թանկարժեք և հազվագյուտ, անհետացման սպառնալիքի տակ հայտնված դեղատու, եթերայուղատու, ներկատու բույսերի, ինչպես նաև արժեքավոր ծառաթփատեսակների տնկիների հիդրոպոնիկ արտադրության գիտական հիմունքների ու կենսատեխնոլոգիաների մշակումը հնարավորություն կընձեռի ստեղծել բարձրարժեք, որակյալ և էկոլոգիապես մաքուր բուսահումքի տեղական արտադրություն, ինչի շնորհիվ հանրապետությունում, կենսաբազմազանության պահպանմանը զուգընթաց, նաև կխթանվի բուսական ծագում ունեցող դեղամիջոցների, բուսական հումքով սննդամթերքի և այլ ապրանքների արտադրությունը, կմատակարարվի մեծաքանակ և անհրաժեշտ տեսակային կազմով ծառաթփատեսակների որակյալ տնկիներ՝ նպաստելով լարված էկոլոգիական վիճակի զգալի թուլացմանը և բարելավմանը:

Հետազոտությունները տարվելու են հետևյալ ուղղություններով.

- Շարունակվելու են հետազոտությունները օրգանիկ հիդրոպոնիկայի եղանակով մի շարք մշակաբույսերի /համեմունքային կանաչեղենի, կանաչ բանջարեղենի և այլն/ արդյունավետության ուսումնասիրման վերաբերյալ;

- ինստիտուտում մշակված և գյուտերի արտոնագրերով պաշտպանված նորամուծական "ջրաշիթցողային հիդրոպոնիկ" 3 տարբեր համակարգերի կիսա-արտադրական փորձարկում և կատարելագործում:
- մի շարք հեռանկարային մշակաբույսերի /օր. Ճապոնական կանաչեղեն և այլն/ ներմուծում անհող մշակույթ և դրանց հիդրոպոնիկ աճեցման հնարավորության ու արդյունավետության գնահատում;
- աճեցման տարբեր միջավայրերի /հիդրոպոնիկ սուբստրատների/ և սննդարար լուծույթների արդյունավետության ուսումնասիրություն;
- արմատային սննդառության օպտիմալացում /սննդարար լուծույթում գլխավոր մակրո- և միկրոտարրերի խտության և հարաբերակցության ուսումնասիրում/, որը հնարավորություն կտա սննատարրերի նվազագույն ծախսով միավորը մակերեսից ապահովել բույսերի բարձր բերքատվություն;
- հիդրոպոնիկ տարբեր համակարգերի /դասական, գլանային, համատարած, ակոսային/ պայմաններում բույսերի արդյունավետության համեմատական բնութագրում, ֆիզիոլոգա-կենսաքիմիական և ագրո-ռադիոքիմիական առանձնահատկությունների հետազոտություններ;
- երկրորդային ծագման կենսակտիվ արժեքավոր նյութերի /ալկալոիդներ, եթերայուղեր, ֆլավոնոիդներ և այլն/ սինթեզի ուղղորդում և խթանում՝ հանքային-արմատային սննդառության ղեկավարման միջոցով;
- ֆիզիոլոգա-կենսա-դեղա-ագրոքիմիական բազմամյա հետազոտությունների արդյունքների հիման վրա բույսերի բերքատվության բարձրացման և երկրորդային ծագման կարևորագույն նյութերի ելի մաթեմատիկական մոդելների ստացում;
- թանկարժեք բուսատեսակների /ուրց, կալանխոե, խնկածաղիկ, հազրեվարդ, նարդոս, ծնեբեկ/ արագ բազմացում *in vitro* և հիդրոպոնիկ *in vivo* համակցված եղանակով;
- աղապտագեն բույսերի և գեղազարդ ծառաթփերի առանձնահատկությունների ուսումնասիրում Դիլիջանի անտառային հիդրոպոնիկական փորձակայանի կենսաերկրահամակեցության պայմաններում;
- ագրոքիմիական և ռադիոքիմիական ուսումնասիրություններ սննդարար լուծույթ-բույս համակարգում՝ անհող մշակույթի պայմաններում;
- հետազոտված առավել արդյունավետ և հեռանկարային բուսատեսակների գիտա-արտադրական լայնամասշտաբ փորձարկում, տնտեսական արդյունավետության գնահատում, առևտրայնացման և ներդրման առաջարկների մշակում:

Ծրագրի իրականացման հետևանքով ակնկալվող արդյունքներն են.

1. Օրգանիկ հիդրոպոնիկայի պայմաններում մի քանի համեմունքային կանաչեղենի աճեցման հնարավորությունը, արդյունավետությունը, ֆիզիոլոգա-ագրոքիմիական և կենսաքիմիական առանձնահատկությունների բնութագրում;
2. նոր, արժեքավոր, հազվագյուտ և անհետացող բուսատեսակների ներմուծում /ինտրոդուկցիա/ հիդրոպոնիկ մշակույթ (ճապոնական ռեհանի 3 տեսակ, ճապոնական մաղադանոս, խնկածաղիկ և այլն);
3. բույսերի ֆիզիոլոգա-ագրոքիմիական և կենսաքիմիական առանձնահատ-կությունների բնութագրում անհող մշակույթի պայմաններում;
4. ջրաշիթացողային-թաղանթային հիդրոպոնիկայի պայմաններում բույսերի արդյունավետության և երկրորդային ծագման նյութերի կենսասինթեզի ինտենսիվության վրա սննդալուծույթի անվերադարձ մղման դերի բնութագրում;
5. բուսահումքի ագրո-ռադիո-կենսա-դեղաքիմիական ցուցանիշների վերահսկում;
6. բույսերի ինտենսիվ աճման ու զարգացման համար միջավայրի օպտիմալ պայմանների ճշգրտում /սուբստրատ, սննդարար լուծույթի կազմ, մակրո-և միկրոսննդատարրերի խտություն ու հարաբերակցություն, սնուցման ու ջրման ռեժիմ և այլն/;
7. համալիր հետազոտությունների արդյունքների հիման վրա բույսերի արդյունավետության բարձրացման մաթեմատիկական մոդելավորում;
8. անհող մշակույթի պայմաններում արժեքավոր և հազվագյուտ բուսատեսակների բանկի հարստացում և պահպանում;
9. բույսերի անհող աճեցման ինովացիոն կենսատեխնոլոգիաների մշակում, դրանց տնտեսական արդյունավետության գնահատում, առևտրայնացման և արտադրության մեջ ներդրման առաջարկների մշակում;
10. անհող մշակույթի պայմաններում էկոլոգիապես առավել անվտանգ և որակյալ բուսահումքի ստացում գիտա-արտադրական պայմաններում:

Հավելված 2

«27» 01 2015թ.

N 2-13 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ

"Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը" ծրագրի

(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	Անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	Վերջնաժամկետը	պահանջվող գումարը (դրամ)
1	1-ին փուլ	գիտական գրականության մշակում, վեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ	հիդրոպոնիկ փորձարարական կայանի լաստակների և վեգետացիոն անոթների, սննդալուծույթ մղող խողովակների վերանորոգում և այլն	ներկայացված են հավելված 1-ի 4-րդ կետում	31.03.2015	10229920
2	2-րդ փուլ	վեգետացիայի նախապատրաստման աշխատանքներ, տնկանյութի ձեռքբերում և վեգետացիայի սկիզբ	լցանյութերի լվացում և ախտահանում, սննդալուծույթի պատրաստում, սերմերի ցանք, կտրոնների տնկարկ, սննդաաղերի և այլ անհրաժեշտ նյութերի ձեռքբերում	ներկայացված են հավելված 1-ի 4-րդ կետում	30.06.2015	12787400
3	3-րդ փուլ	բույսերի խնամք, կենսամետրիկ չափումներ, ֆիզիոլոգա-կենսաքիմիական վերլուծություններ	սնուցում, բերքահավաք, վերլուծություններ	ներկայացված են հավելված 1-ի 4-րդ կետում	30.09.2015	12787400
4	4-րդ փուլ	կենսամետրիկ չափումներ, ֆիզիոլոգա-կենսա-դեղաքիմիական և ագրոռադիոքիմիական վերլուծություններ	բերքահավաք, վերլուծություններ, տվյալների մշակում	հոդվածների տպագրում, հաշվետվության ներկայացում	31.12.2015	15344880
Ընդամենը						51149600

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

ՀՀ ԳԱԱ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ

Տնօրեն՝ Խաչատուր Մայրապետյան

(ստորագրություն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Ստեփան Մայրապետյան)

(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 3
«27» 01 2015թ.
N 2-13 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

"Բույսերի անհող մշակույթի ֆիզիոլոգա-կենսաքիմիական ու ագրոքիմիական հիմունքների և հիդրոպոնիկ արտադրության կենսատեխնոլոգիաների մշակումը" ծրագրի

(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի և ի դեմս ՀՀ ԳԱԱ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտի տնօրեն Խաչատուր Մայրապետյանի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել «27» 01 2015թ. N2-13 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ 51149600 /հիսունմեկ միլիոն հարյուր քառասունինն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ գումարի չափով:

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	ՀՀ ԳԱԱ Գ.Ս.Դավթյանի անվան հիդրոպոնիկայի պրոբլեմների ինստիտուտ
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24, Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100, ՀՎՀՀ 00005673	ք. Երևան, 0082, Նորագյուղ 108, Զարգացման հայկական բանկ հ/հ 1810052011973313, ՀՎՀՀ 01803321
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	Տնօրեն՝ /Խ.Մայրապետյան
(ստորագրության)	(ստորագրության)

Ծրագրի գիտական ղեկավար՝ (Ստեփան Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ռ.Մարտիրոսյան
ՌԱՖԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հավելված 4
«27» 01 2014թ.
N4-13 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	40471.2	8094.2	10117.8	10117.8	12141.4
2	տնտեսական և այլ ծախսեր	10678.4	2135.7	2669.6	2669.6	3203.5
3	ընդամենը	51149.6	10229.9	12787.4	12787.4	15344.9

Տնօրեն՝ _____ (Խ.Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (Հ. Զուրաբյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Ծրագրի գիտական ղեկավար՝ _____ (Ս. Մայրապետյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.